

Տարեկան գինը 10 ռուբլի կես տարվան 6 ռուբլի
Առանձին համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյանի խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлис, Редакция «Мпакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆոն № 253.



Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ առաւօրեայ):

Յայտարարութիւն ընդունվում է առանձին լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպեկ.
Տէլէֆոն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Կարեւոր կարգադրութիւն.—Ներքին Տե-
սիստիւն. Մամուլ. Նամակ Հին-Նախիջևա-
նի գաւառից. Նամակ Խմբագրութեան. Ներքին
լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍԻՍՏԻՒՆ. Վիկտորիա
թագուհու մահը եւ Կ. Պոլսի հայերը. Արտաքին
լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒ-
ԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Միասին եւ
միասնակ:

ԿԱՐԵՒՈՐ ԿԱՐԳԱՐՈՒԹԻՒՆ

Կովկասեան կառավարչապետ իշխան Գ.
Գոլիցին վերադարձ Գ-ին հրատարակել է
մի շրջաբերական, որ վերաբերում է մեր
երկրի վարչական մարմինների մի որոշ
գործունէութեան եւ պետք է գիւրու-
թիւններ ընծայէ ազգաբնակչութեանը մի
քանի կէտերով:

Նախկին կառավարչապետները, ասում
է շրջաբերականը, իշխան Դոնդուկով-Կոր-
սակով եւ զենեարա-աղետան Շերեմետեւի,
մի շարք կարգադրութիւններով տուել
էին Անդրկովկասի նահանգապետներին
յատուկ լրագորութիւններ, իբրեւ ժամա-
նակաւոր միջոցներ, արմատախիլ անելու
մի յայտնի տեղում սաստիկացած յանցանք-
ները: Ի նկատի ունենալով վերջ տալ
աւագակութիւններին, որ մասնաւոր բազ-
մազէն էին 1897 թվին, եւ հրատարա-
կելի 1898 թվի փետրվարի 6-ին մի
շրջաբերական, որով շնորհվում էին նա-
հանգական եւ գաւառական վարչութիւն-
ներին յատուկ լրագորութիւններ մաքա-
ռելու աւագակութեան դէմ, որոնք սա-
կայն ծանր բեռ էին դարձել ոչ միայն
առանձին անհատների, այլ եւ գիւղական
ամբողջ հասարակութիւնների վրա: Այդ
բոլոր արտակարգ լրագորութիւնները, որ
տրվել էին զանազան ժամանակներում,
համարեա թէ 20 տարվայ ընթացքում,
զործագրվում էին խիստ տարբեր եղա-
նակներով եւ երբեմն անկանոն կերպով:
Այդ միջոցները, իբրեւ արտակարգ եւ բա-
ցառիկ հանգամանքներից բխած միջոցներ,
մի քանի դէպքերում պատճառ էին լինում
տեղական ազգաբնակչութեան տնտեսական
կեանքի անկման:

Այլի առաջ ունենալով այդ բոլոր հան-
գամանքները, այլ եւ այն, որ այժմ թու-
լանում է աւագակութիւնը Անդրկովկա-
սում, իշխան կառավարչապետը ներկայ
շրջաբերականով մի անգամայն ուղեւորում
է բոլոր այն բացառիկ կարգադրութիւն-
ները, որոնք մինչեւ այժմ հրատարակվել
են: Այսուհետեւ եթէ հարկաւոր լինեն

բացառիկ լրագորութիւններ, դրանց մա-
սին նահանգապետները պարտաւոր են
իւրաքանչիւր անգամ յատուկ գիմնաւոր
անել կովկասեան կառավարչապետին: Նա-
հանգապետներին եւ գաւառապետներին ի-
րաւունք է տրվում կասկածելի անձանց կա-
լանաւորել, սակայն նրանց մասին պէտք է
երկու շաբաթվայ ընթացքում մանրամասն
զեկուցում ներկայացվի կառավարչապետին:

Ներկայ շրջաբերականը կուսնայ ար-
դիւնաւէտ հետեւանքներ: Մեր երկրի գա-
նադան տեղերում պահպանվել են ազգա-
բնակչութեան համար ծանր պարտաւորու-
թիւններ, որոնք սակայն կորցրել են ի-
րանց զործնական նշանակութիւնը եւ նը-
պատակալարմարութիւնը: Շրջաբերականը
վերացնում է բացառիկ գրութիւնը եւ
հաստատում է սովորական կարգեր:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍԻՍՏԻՒՆ

Մ Ա Մ Ո Ւ Լ

Առաջին անգամը չէ, որ մենք փորձով հա-
մոզվում ենք, թէ ինչ ցաւալի երբեմնակի
ենթարկված մեր պոստայն եղբայրների միջոցը:
Այս էջերում մենք չառ անգամ ենք առիթ ու-
նեցել ցոյց տալու, թէ ինչպէս չառ տարրական
ճշմարտութիւններ, որոնք ընդունված են ա-
մեն տեղ եւ քաղաքակրթութեան հիմքերն են
կողմում, դու լինելի են թուրքահայ ինտելի-
գենցիայի համար: Յայտնի է, օրինակ, որ հա-
սարակական կարծիքը լուսաւոր աշխարհում
առաջադիմական անազնի նշանակութիւն ունի
եւ Անդրկաս, ամենից առաջադէմ երկիրը, ի-
նորագոյն պատմութեան մէջ ցոյց է տալիս թէ
ինչ ոյժ է հասարակական կարծիքը: Բայց ան-
ցեղաներում «Արեւելք» լրագիրը առաջնորդող
բաժնում տպագրելով Մուսկով վարդապետի մի
յօդուածը, որի մէջ հասարակական կարծիքը
ամուսնված է հրէշ, այդ հրէշն է բոլոր չա-
րիքների պատճառը, նա է, որ թող չէ տալիս
առաջանալ, բարեկարգվել: Մեզանում հասա-
րակական կարծիքը առանց այդ էլ արհամարհ-
ված է եւ այսպիսի հրապարակական քարոզը
մենք պիտի համարենք մի դժբախտութիւն:
Բարեբախտաբար, թիւ բընադարձի մէջ դեռ կան
մարդիկ, որոնք գիտեն սեւը սպիտակից զա-
նազանել: Մուսկով վարդապետին տուած մի
պատասխանի մէջ, որ տպագրված է նոյն «Ա-
րեւելքում», մենք կարդում ենք.

Կուզենք բոլոր թէ կարեւորութիւն տուողն
ոյ է հասարակաց կարծիքը բնութեւն բանին,
կուզէ ի նպաստ, կուզէ ընդդէմ ըլլայ այն
ո եւ առաջնորդի կամ կրթական մարմին:
Ո՞ր առաջնորդը, թաղականը կամ հոգաբար-
ձուն մինչեւ ցարդ անհամութիւն ցոյց տուած

է անոր, կամ իր ընկերքէն ետ կեցած է հա-
սարակաց դատաստանէն վախճալուն կամ
զգուշանալուն համար: Ե՞րբ տեսնուած է որ
կրթական մարմինները մեր մէջ ո եւ է յար-
գանք ընծայած ըլլան ժողովրդեան գանգատ-
ներուն: Տեսած էք երբեք առաջնորդ մը որ
հրաժարած ըլլայ միմյանի տեղի տալով հա-
սարակաց ճային եւ կամ վարչական որո-
շում մը որ պատճառ կամ հրաժարեցուցած
ըլլայ ո եւ է առաջնորդ կամ պաշտօնայ ի
յարգանս ժողովրդեան ճային եւ արդար
բողոքներուն: Կենդանի օրինակներ կուզէք,
ահա Խարբերդի առաջնորդ Պետրոս վարդա-
պետը, որուն դէմ բարձրացած միահամուռ
գանգատները մինչեւ եօթներորդ երկինքը
հասան, կարեւորութիւն մը ունեցան: Ինքը
Պետրոս վարդապետը մեղի ճային մը չափ
ուչ դարձուց անոնց. Պատրիարքարանի ժո-
ղովները իրմէ աւելի կարեն որոշութիւն տուին
այդքան բողոքներուն, որոնք արձագանք
գտան երբեմն ազգային բոլոր լրագիրներուն
մէջ առնաւարակ, առանց ո եւ է խորու-
թեան եւ հիմա միայն անոր համար խորացած
են, վասն զի ամենքն ալ համոզուեցան թէ
հասարակաց ճային ո եւ է օրուտ չունի այդ
մասին, եւ միայն Մուսկով վարդապետը միա-
ցած է որ անոր գոյութիւնը կը ճանաչուի եւ
ի դուր կը դատաւարուի: Եթէ երբեք հա-
սարակաց կարծիքը արժէք մը ունենար, Ա-
կիւսիմուս քահանային երկու ամսուան փի-
լոնադրութեան պատճիմ միայն կորույթ
Մարգարէանի կրօնական ժողովը, այն քահա-
նային որ որրի մը անկողինն մէջ ըսնուած
էր en flagrant délit (յանցանքի տեղը), ինչ-
պէս տեղւոյն թղթակիցները նկատարեցին
թէ «Արեւելք» եւ թէ բոլոր ազգային լրա-
գիրներուն մէջ, առանց բացառութեան Եթէ
երբեք հասարակաց կարծիքը գոյութիւն ու-
նենար, Մարգարէանի կրօնական ժողովը կը
համարձակէր կեղծ. Կրօն. ժողովին տեղե-
կագրել իր այդ պատճառան անօրինութիւ-
նը, առանց ծանր յանցիմանութիւն մը վախ-
նալու սողոմական այդպիսի տօրի մը դէմ
այդքան անհաւան պատիժ մը միայն որոշած
ըլլալուն համար: Այլ եթէ հասարակաց կար-
ծիքը բնութեւն բան մը իրօք ըլլար մեր մէջ,
կեղծ. Կրօն. ժողովը չէր փութար հեռագրով
իսկ կարգադրել ընկ այդ սողոմանին քահա-
նան, եւ հակառակ այդքան գաղթական լրա-
հրատարակութեանց լուրջին կը պահէր
այսպիսի ժամանակի Դարձակ եթէ հասարա-
կաց կարծիքը ո եւ է արժէք ունենար,
Պատրիարքի Թաթուլ վարդապետին համար
որոշումը պատճառան տնօրինութիւնը իր
հայրենի տունը եւ մուսուլման ծննդավայ-
րը այցելութիւն մը տալու գեղեցիկ ու փա-
փազելի ձեւին կը վերածուէր, ըսել է միա-
մեայ արձակուրդ մը վայելելու վարձատրու-
թեան կարծանաւար, փոխանակ պատճառան
ապաշխարութիւն մը կրնուի Թաթուլ վար-
դապետը պատժող արժանի ընթացքի մէջ
գտնուած էր կամ ոչ: Եթէ գտնուած ըլլալով
պատիժ մը տալ անհրաժեշտ դարձած էր,
ինչպէս կարգան չուտ ներկեցաւ. որ առաջ-
նորդ կամ տեղապահը չը պիտի փափագէր
իր ծննդավայրը այցելելու նպատակով միա-
մեայ արձակուրդ մը վայելելու համար այդ-

պիսի յանցանք մը գործել, այնպիսի ցանկա-
լի պատիժ մը իր վրա հրաւիրելու կանխա-
տեսութեամբ: Եւ դեռ Մուսկով վարդապետը
կը կարծէ թէ հասարակաց կարծիք կայ,
զոր հարուածել կը ջանայ, փափագելով ան-
շուշտ որ բնաւ չըլլայ: Բայց թող ապահով
ըլլայ որ արդէն չը կայ, եւ եթէ ըլլայ իսկ,
կարեւորութիւն առնողն ու չէ:

Այս տեսակ զգուշի ճանիճ կարող է գո-
յութիւն ունենալ այնպիսի երկրներում, ուր
մեռած է հասարակութիւնը, ուր հասարակա-
կան գիտակցութիւնը համարվում է հրէշային
երեւոյթ: Միահամայն ճիշդ է, որ հասարա-
կական կարծիքի բացակայութիւնն է, որ ան-
պատիժ է թողնում լրութիւնները: Ուր չը
կայ պահանջ եւ պատասխանատուութիւն, այն-
տեղ չէ կարող լինել օրինաւոր, պատուի ար-
ժանի ժողովուրդ: Հասարակական կարծիք չը
կայ, պէտք է նրան ստեղծել, տալ նրան պատ-
կառելի դիրք. դատաւոր հանդիսանալու: Մենք
ի հարկէ, հասարակական կարծիք չենք կարող
համարել ամբողջային նախապաշարմունքները:
Ո՞չ, իսկական բարեկեցութեան տանող հասա-
րակական կարծիքը պիտի զեկալարվի առա-
ջադէմ, գաղափարական սկզբունքներով, պիտի
ժամանակի պահանջները բարձրութեան վրա
կանգնած լինի: Հէնց դրա համար է ժամուրդ,
հրապարակախօսութիւնը. մենք պէտք է ստեղ-
ծենք, զեկալարենք առողջ, կենսունակ հասա-
րակական կարծիք: Իսկ եթէ մեր այդ իսկա-
կան կոչումը կատարելու փոխարէն վեր կը կե-
նանք եւ կը յայտնուենք այնպիսի անմիտ ու
բարբառոտական միտք, թէ հասարակական կար-
ծիքը հրէշ է, այն ժամանակ մենք մեր ձեռ-
քով գերեզման կը փորենք մեզ համար եւ կը
դառնանք փառած ու գարշահոտ դիակներ...

ՆԱՄԱԿ ՀԻՆ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻ ԳԱՒԱՌԻՑ

Կուրբէկ-դիւղա գիւղ, փետրվարի 4-ին
«Մուրճ» ամսագրի ներկայ տարվայ յոսնվար
ամսի համարում բժ. Վ. Արծրունու «Ամուս-
նութիւնը» անունով առողջապահական էտիկը
գլխի մի քանի խաւերում մեծ տպաւո-
րութիւն թողւոյ ընկերացողների վրա: Այդտեղ
վարդապետ եւ անչափաճառ ամուսնութիւնների
վրա խօսելիս՝ յաճախ կրկնում էին թէ՛ կարծեա
պ. բժիշկը 20 տարի իրանց մէջ է ապրել, որ
այդպէս իրական կերպով թուում է անչափաճառ
ամուսնութիւններից առաջ եկած հետեւանք-
ները, որոնք իւրաքանչիւր տարի, իւրաքան-
չիւր ամիս տեղի են ունենում եւ կրկնվում են
իրանց աչքի առաջ, բայց ոչինչ ռիպիեցող
ազդեցութիւն չեն ունեցել իրանց վրա, որովհե-
տեւ իրանք այդ բոլորը վերագրել են ձակա-
տագրի կամ բաղդի հարուածներին: Պատում
էին, թէ ինչպէս անչափաճառ ամուսնութիւն-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄԻԱՍԻՆ ԵՒ ՄԻԱՅԻՆԱԿ

(Յրանսերէնից)

Տիկին Վերնոն մի պատրուակով հեռացրեց ա-
մուսնուն:

Յետոյ՝ բժիշկներ հրաւիրելով՝ հարց ու փորձ
արեց իր հիւանդութեան մասին:

Բժիշկները յոյս տուեցին, որ նա կարող է
ստողանալ Յամանայն գէպ՝ նախազգուշու-
թեան համար՝ նրանք խորհուրդ տուեցին, որ
հիւանդը իր վերջին կամքը յայտնէ, իր վերջին
անօրէնութիւններն անէ:

Տիկին Վերնոն հասկացաւ... Ծնորհակալու-
թիւն արեց նրանց անկեղծութեան համար եւ
արձակեց:

Աղախինը լուռ-մուռ արտասուեց էր թա-
փում՝ մահճակալի մօտ մեխված:

Նա հրամայեց աղախին բերել թուղթ, զը-
միչ եւ ինչ որ հարկաւոր էր գրելու համար:

Խեղճ աղջիկը, որ վաղուց ծառայում էր իր
տիբուհուն, աղիողորմ լալով ներս բերեց անհ-
րաժեշտ իրերը:

—Այժմ կարող ես թողնել ինձ, տիբուհի,
եւ կամենում եմ միայնակ մնալ...

Աղախինը հեռացաւ՝ տխուր, ակամայ:

Հիւանդը վերցրեց գրիչը եւ անյապաղ սկսեց
գրել: Նա արդէն գիշերաւանից նախապատրաս-
տած ունէր իր վերջին ժամերում այն բոլորը,
ինչ որ վերջին անգամ ասելու ունէր:

Գրում էր նա առանց չտապելու, առանց դո-
ղի ու տենդի, լաւ իմանալով, լաւ յիշելով այն
խօսքերը, որ նա ընարել էր անթիւ նոյնանման՝
բայց ոչ այնչափ անհրաժեշտ խօսքերի միջից:

Նամակը վերջացած՝ նա նորից սկսեց կար-
գալ կիսաձայն, աշխատելով ներշնչել իւրաքան-
չիւր բառի մէջ իր ակցենտի քնքշութիւնը:

Նա ծալեց թուղթը, կնքեց, վրան գրեց ա-
մուսնուն անունը միայն եւ զանգահարեց:

Աղախինը բազմապէս երեւաց չէմբում, տի-
բուհուն հրամանով փակեց թուղթը գրասեղանի
արկղիկներից մէկում, վերադարձրեց բանալին
եւ նորից անյապաղ:

Պ. Վերնոն տուն վերադառնալով՝ անմիջա-
պէս մտաւ հիւանդի սենեակը:

Վերջինս սպասում էր նրան անհամբեր:

—Էլ այսուհետեւ ինձ միայնակ չը թողնես,
անհուն քնքշութեամբ մրմնջաց հիւանդը: Մնա
ինձ մօտ միշտ... մինչեւ մեր անջատման վեր-
ջին վայրկեանը, անջատման, որ մեր երկուսիս
համար էլ հաւատարմեան ծանր պիտի լինի...

Պ. Վերնոն նստեց հիւանդի կողքին եւ ընդ-
նեց նրա ձեռքը:

—Վերցրու, շարունակեց հիւանդը, վերցրու,
բարեկամ, այս բանալին եւ պահիր քեզ մօտ:
Երբ ես այլ եւս չեմ կենդանի չեմ լինի, դու կը
հանես իմ գրասեղանի ձախակողմնայն արկղիկից
մի նամակ քո անունով: Այդ նամակը ես եմ
գրել, դու կը կարդաս նոյն ուշադրութեամբ,
որով դու այս բազմին ակաւնը ես գնում ինձ:
Ես գիտեմ, ո՛, ես կատարելապէս հաւատացած
եմ, որ դու ճշդութեամբ կը կատարես այն,
ինչ որ ես ինդրում եմ քեզանից: Մենք եր-
կուս մի եւս չենք ունեցել եւ մի կամք...

Եւ նա լռեց:

Ժամանակ առ ժամանակ նա մրմնջում էր.
«Իմ բարեկամ», դեռելով այդ հասարակ բառերի
մէջ անհուն քաղցրութիւն, իր սիրտը, ամբողջ
հոգին...

Ամուսինը համբուրում էր հիւանդի ձեռքը,

այն սիրելի ձեռքը, որ նա գիշեր ցերեկ պահել
է իրենի մէջ՝ գրեթէ ամբողջ տաւն եւ ութ
տարի անընդամ...

Երկու ամուսինները լուռ էին: Նրանք այլ
եւս չէին խօսում եւ ոչ մի բառ: Նրանք յի-
շում էին միմեանց...

Երկուսի երջանկութիւնը վերջանալու մօտ
էր: Նրանք յուսահատված էին, որ անգոր են
գէթ մի ժամ ընծած պահելու այդ երջանկու-
թիւնը: Նրանց հայեացքները թափանցում էին
իրար հոգու խորքերը՝ մտքեր եւ բուն տիկոյ
զգացմունքներ փոխանակելու անհուն ցանկու-
թեամբ:

Այսպէս նա ապրեց երեք օր: Զորքող գի-
շերը մեռաւ:

Ամուսինը ցած քաշեց արտեւանունքը ան-
կենդան աչքերի վրա: Նրա վիշտը չոր-ցամաք
էր, առանց արտասուքների, այն վշտերից միւրը,
որ ոչ մի արցունք, ոչ մի խօսք, ոչ մի տրը-
տունչ չէ կարող մեղմացնել:

Առաւօտը, հէնց որ արշալոյսի առաջին շողն
ընկաւ մեռելի գունատ դէմքի վրա, նա զոգաց
այն մեծ սարսուռով, որ աւելի չուտ պիտի
զգար մահացածը: Նա փորձեց իր չնչով առա-
ջայնել սիրելեալ ամուսնու մատնելով Բայց

Սերմայան

Типографія Грузинск. Т—ва, Большая-Ванская ул., № 27